



Մանրածախ հաստատությունների վերաբացման Արձանագրություններ՝ անհատական գնումների համար. Լրացում Բ

Վերջին փոփոխություններ.

7/08/20. Տրամադրվել է հավելյալ տեղեկատվություն աշխատակիցների արձակուրդային նպաստների և օդափոխության և օդորակման համակարգի բարելավումների վերաբերյալ:

7/18/20. Տրամադրվում է հավելյալ տեղեկատվություն աշխատակիցների և այցելուների դեմքի ծածկոցների և ախտանիշների ստուգման վերաբերյալ (փոփոխությունները նշված են դեղինով):

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը որդեգրում է որոշ մանրածախ բիզնեսների վերաբացման թույլտվության քաղաքականություն՝ հիմնվելով գիտական և հանրային առողջապահական փորձաքննության վրա: Ստորև ներկայացվող պահանջները նախատեսված են մանրածախ ձեռնարկությունների համար, որոնց թույլատրվել է վերաբացվել՝ անհատական գնումներ կատարելու համար, համաձայն 2020թ.-ի մայիսի 26-ի Նահանգային Հանրային Առողջապահության Պատասխանատուի Հրամանի: Ի հավելումն Նահանգապետի կողմից այս որոշակի մանրածախ բիզնեսներին ներկայացված պահանջին, այս տեսակի բիզնեսները պետք է համապատասխանեն նաև անհատական գնումներ կատարելու համար բացվող մանրածախ հաստատությունների համար նախատեսված ստուգաթերթի ներկայացված պահանջներին:

Խնդրում ենք նկատի ունենալ՝ Այս փաստաթուղթը կարող է թարմացվել՝ կախված լրացուցիչ ինֆորմացիայի և ռեսուրսների հասանելիությունից, ուստի անպայման կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելես Շրջանի կայքը <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/> այս փաստաթղթի թարմացումներին հետևելու համար:

Այս ստուգաթերթը ներառում է

- (1) Աշխատավայրերի քաղաքականություններ և գործելակերպեր՝ ուղղված աշխատակիցների առողջության պահպանմանը:
- (2) Ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցառումներ:
- (3) Վարակի վերահսկումն ապահովող միջոցառումներ:
- (4) Աշխատակիցների և հանրության հետ հաղորդակցություն:
- (5) Կարևոր ծառայությունների հավասար հասանելիության միջոցառումներ:

Պետք է անդրադառնալ այս հինգ հիմնական ոլորտներին, եթե ձեր հաստատությունը մշակի վերաբացման արձանագրություններ:

Այս ուղեցույցում ընդգրկված բոլոր մանրածախ բիզնեսները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրել, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում չի



Վերաբերում իրենց բիզնեսին:

Բիզնեսի անուն՝ _____

Հաստատության հասցե՝ _____

Տեղադրման ամսաթիվ՝ _____

A. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ (ՆՇԵՔ ԲՈՒՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

- Բոլոր նրանց, ովքեր կարող են իրենց պարտականությունները կատարել տնից, հանձնարարվել է այդպես անել:
- Խոցելի աշխատակիցներին (65 տարեկանից բարձր տարիքի և խրոնիկական հիվանդություններ ունեցող) հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որը հնարավոր է տնից անել:
- Բոլոր աշխատակիցներին ասվել է հիվանդ ժամանակ չգնալ աշխատանքի: Աշխատակիցները գիտակցում են, որ անհրաժեշտ է հետևել Հանրային Առողջապահության Վարչության ինքնամեկուսացման և կարանտինի ուղեցույցին, եթե կիրառելի է: Աշխատավայրի բացակայության քաղաքականությունը վերանայվել և փոփոխվել է՝ ապահովելու, որ աշխատողները չտուժեն, եթե հիվանդության հետևանքով տանը մնան:
- Աշխատակիցներին տրամադրվում է տեղեկատվություն գործատուի կամ պետության կողմից հովանավորվող բացակայության նպաստների մասին, որոնք աշխատակիցը միգուցե իրավունք ունենա ստանալու, որը ֆինանսապես կհեշտացնի տանը մնալը: Տես հավելյալ տեղեկությունների՝ [հիվանդության հետևանքով բացակայությունների աջակցության պետական ծրագրերի և COVID 19-ի հետ կապված աշխատակիցների փոխհատուցումների](#), ներառյալ՝ աշխատողների հիվանդության հետևանքով բացակայությունների իրավունքները [Ընտանիքների կողմից Կորոնավիրուսի առաջին արձագանքի Ակտի](#) և աշխատողների փոխհատուցման նպաստների իրավունքները և COVID-19-ի աշխատանքի հետ կապված ենթադրությունը՝ համաձայն Նահանգապետի [N-62-20 Գործադիր հրամանի](#) վերաբերյալ:
- Աշխատանքային գործընթացները հնարավորինս վերաձևակերպվում են՝ մեծացնելու աշխատակիցների՝ տնից աշխատելու հնարավորությունները:
- Տեղեկանալու դեպքում, որ մեկ կամ ավելի աշխատակիցներ թեստի դրական արդյունքներ կամ COVID-19-ի հետ համընկնող ախտանիշներ ունեն, գործատուն ունի պատրաստի ծրագիր կամ արձանագրություն՝ այդ անձ(անց)ին տանը ինքնամեկուսացնելու, ինչպես նաև պետք է անհապաղ ինքնա-կարանտին պահանջի բոլոր աշխատողներից, ովքեր աշխատանքի վայրում շփել են այդ անձ(անց)ի հետ: Գործատուի ծրագրով պետք է նախատեսվի արձանագրություն, ըստ որի բոլոր հնարավոր վարակված աշխատակիցները կթեստավորվեն կամ հնարավորություն կունենան թեստավորվելու COVID-19-ի համար՝ որոշելու, թե արդյոք աշխատավայրում եղել են այլ վարակվողներ, որը կպահանջի COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տես՝



Հանրային Առողջապահության ուղեցույցը [Աշխատավայրում COVID-19-ին արձագանքելու վերաբերյալ](#):

- Իրականացվում է [աշխատակիցների ստուգումներ](#)՝ նախքան աշխատակիցներին կթույլատրվի աշխատավայր մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցի դիտարկում, ինչպես նաև հարցում, թե արդյոք աշխատակիցը նախորդ 14 օրվա ընթացքում շփվել է COVID-19-ով վարակված մարդու հետ: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատապես՝ աշխատակցի ժամանելուն պես: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:
- Աշխատավայրի ներսում 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի հաստատված դեպքերի պարագայում, գործատուն պետք է Հանրային Առողջապահության Վարչությանը տեղեկացնի այս խմբի մասին՝ զանգահարելով (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներին: Եթե բռնկումը հայտնաբերվում է աշխատանքային վայրում, ապա Հանրային Առողջապահության Վարչությունը մեկնարկում է բռնկման արձագանքելու քայլեր, ինչը ներառում է վարակի դեմ պայքարի ցուցումների և առաջարկների տրամադրում, տեխնիկական աջակցություն և տեղանքին հատուկ վերահսկողության միջոցառումներ: Հանրային առողջապահության կառավարիչը կստանձնի բռնկման հետաքննությունը՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:
- Այն աշխատակիցներին, ովքեր շփվում են ուրիշների հետ, անվճար տրամադրվում է դեմքի ծածկոց, որը ծածկում է քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է մշտապես կրի դիմակը ողջ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Աշխատակիցները, ում բուժաշխատողները հանձնարարել են չկրել դեմքի ծածկոցներ, պետք է կրեն ներքև եզրին շղարշ ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձևն են ստանում կզակի տակ: Միակողմանի փականներ ունեցող դիմակները չպետք է կիրառվեն: Աշխատակիցները կարիք չունեն դեմքի ծածկոցներ կրել, երբ մենակ են անձնական գրասենյակում կամ պինդ միջնապատերով առանձնացված աշխատախցում, որի միջնապատերի բարձրությունը գերազանցում է աշխատակցի հասակը կանգնած ժամանակ:
- Աշխատակիցներին հանձնարարվում է իրենց դիմակները լվանալ ամեն օր:
 - Գործատուները պետք է հաշվի առնեն, որ դեպքերում մեկանգամյա օգտագործման ձեռնոցների կիրառումը կարող է օգտակար լինել՝ ի հավելում հաճախակի ձեռքերը լվանալուն և ձեռքերի ախտահանիչ միջոց օգտագործելուն; օրինակները այն աշխատակիցների համար են, ովքեր ստուգում են մյուսների մոտ ախտանիշների առկայությունը կամ գործ են ունենում հաճախակի դիպչող իրերի հետ:
 - Բոլոր աշխատանքային վայրերը առանձնացված են առնվազն վեց ոտնաչափով:
 - Բաշխման տարածքները (մայթերից ապրանքները վերցնելու համար), ընդմիջումների սենյակները, պետքարաններն ու այլ ընդհանուր վայրերը հաճախակի ախտահանվում են հետևյալ ժամանակացույցով.
 - Բաշխման տարածք _____
 - Ընդմիջման սենյակներ _____
 - Պետքարաններ _____



Այլ _____

- Համապատասխանելով աշխատավարձի և ժամերի կարգավորումների պահանջներին՝ ընդմիջումները կազմակերպվում են այնպես, որ ընդմիջման սենյակներում աշխատակիցների միջև ողջ ժամանակ հնարավոր լինի պահպանել վեց (6) ոտնաչափ հեռավորություն:
- Աշխատակիցներին արգելվում է ուտել կամ խմել իրենց աշխատանքային վայրի ներսում, բացի ընդմիջման համար նախատեսված սենյակներից՝ համոզվելու համար, որ դիմակները հետևողականորեն և ճիշտ են կրում:
- Ախտահանող և հարակից նյութերը աշխատակիցներին հասանելի են հետևյալ վայր(եր)ում՝ _____
- COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի լվացման միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում _____
- Աշխատակիցներին թույլ է տրվում հաճախակի ընդմիջումներ անել իրենց ձեռքերը լվանալու համար:
- Յուրաքանչյուր աշխատակցի բաժանվել է այս արձանագրության կրկնօրինակը:
- Ըստ հնարավորինս, յուրաքանչյուր աշխատողի հատկացվում է իր սեփական պարագաները, սարքավորումները և աշխատելու համար սահմանված վայր: Դիպչելու ենթակա առարկաների համատեղ օգտագործումը հասցվում է նվազագույնի կամ բացառվում:
- Իրենց հերթափոխների ընթացքում, աշխատակիցներին ժամանակ է տրամադրվում մաքրման աշխատանքներ իրականացնելու համար: Մաքրման աշխատանքները պետք է հանձնարարվեն աշխատանքային ժամերի ընթացքում՝ որպես աշխատակցի աշխատանքային պարտականությունների մաս:
- Այս ստուգաթերթիկում նկարագրված բոլոր քաղաքականությունները, բացի նրանցից, որոնք կապված են աշխատանքի ընդունման պայմանների հետ, վերաբերում են առաքման անձնակազմին և ցանկացած այլ ընկերություններին, որոնք կարող են սվյալ տարածքում գտնվել որպես երրորդ կողմ:
- Լրացուցիչ (ընտրովի)- Նկարագրել այլ միջոցառումներ.

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Հաճախորդների թիվը մանրածախ առևտրի խանութում բավարար չափով քիչ է՝ ապահովելու ֆիզիկական հեռավորության պահպանումը, բայց ոչ մի դեպքում չի կարող խանութի առավելագույն տարողողունակության 50%-ից ավելի լինել:
Հաստատությունում հաճախորդների առավելագույն քանակը պետք է լինի-----
- Մանրածախ խանութը հսկում է բոլոր մուտքերը՝ մարդկանց թիվը վերահսկելու համար:
Հնարավորության դեպքում տրամադրեք մեկ, հստակ սահմանված մուտք և առանձին ելք՝ օգնելու

պահպանել ֆիզիկական հեռավորություն:

- Պատրաստ եղեք հաճախորդներին դրսում հերթ կանգնեցնելու՝ միաժամանակ պահպանելով ֆիզիկական հեռավորությունը, ներառյալ տեսողական ցուցանակների կիրառմամբ: Ըստ անհրաժեշտության կտորից դիմակ կրող աշխատակիցը (կամ աշխատակիցները, եթե մեկից ավելի մուտքեր կան) պետք է կանգնի դռան մոտ, սակայն առնվազն 6 ոտնաչափ հեռու ամենամոտ գտնվող հաճախորդներից, որպեսզի հետևի հաճախորդների թվին և ուղղորդի հաճախորդներին 6 ոտնաչափ միմյանցից հեռու շարք կանգնելու դրսում, եթե հաստատություն մտնելու հաճախորդների թիվը առավելագույնի է հասել:
- Միջոցառումներ են իրականացվում՝ աշխատակիցների և հաճախորդների միջև առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորության ապահովելու համար: Սա կարող է ներառել՝ ֆիզիկական միջնապատերի կամ տեսողական ցուցանակների օգտագործում (օրինակ՝ հատակի գծանշում, գունավոր ժապավեն կամ նշաններ, որոնցով նշվում է, թե որտեղ պետք է աշխատողները և (կամ) աշխատակիցները կանգնեն):
- Տրամադրեք մեկ, հստակ սահմանված մուտք և առանձնացրեք ելքը՝ օգնելու հնարավորինս պահպանելու ֆիզիկական հեռավորությունը:
- Գանձապահների և հաճախորդների միջև վարակը նվազագույնի հասցնելու համար, դրամարկղերի մոտ միջոցառումներ են ձեռնարկվել, ինչպիսիք են՝ օրգանական ապակուց պատնեշները: Մուտքերի, վճարման շարքերի և դրամարկղերի մոտ ցուցանակներ են փակցվել՝ հիշեցնելու հաճախորդներին ֆիզիկական հեռավորություն պահելու մասին:
- Կանոն ժապավենով կամ այլ նշումով սահմանեք հերթի սկիզբը՝ վճարման շարքի հաճախորդների համար և 6 ոտնաչափ տարածություն հետագա մոտեցող հաճախորդների համար, ովքեր կմիանան շարքին:
- Աշխատակիցներին հանձնարարվել է խանութի ամբողջ տարածքում հաճախորդներից և միմյանցից պահպանել առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն: Աշխատակիցները կարող են ակնթարթորեն մոտենալ, երբ դա անհրաժեշտ է՝ վճարումներն ընդունելու, ապրանքներ կամ ծառայություններ մատուցելու կամ այլ անհրաժեշտության դեպքում:
- Աշխատակիցների գուգարաններից հաճախորդները չեն կարող օգտվել:
- Աշխատակիցների աշխատակայանները առանձնացված են առնվազն 6 ոտնաչափով, իսկ ընդհանուր տարածքները ձևփոխված են՝ աշխատողների հավաքույթները սահմանափակելու համար, որպեսզի առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն ապահովվի:
- Հանգստի սենյակները և այլ ընդհանուր տարածքները ձևափոխվել են՝ սահմանափակելու աշխատակիցների կուտակումները, որպեսզի ապահովվի առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորության պահպանումը: Որտեղ հնարավոր է, ստեղծվել են արևապաշտպան ծածկերով և աթոռներով դրսի տարածքներ՝ օգնելու պահպանել ֆիզիկական հեռավորությունը: Համապատասխան աշխատավարձի և ժամաքանակի կարգավորումների, աշխատակիցների ընդմիջումները փոփոխվել են՝ օգնելու պահպանել ֆիզիկական հեռավորության արձանագրությունները:
- Ֆիզիկական հեռավորության պահանջները կիրառվում են բեռնման տարածքներում, և առաքումների համար կիրառվում են առանց հպվելու ստորագրություններ:
- Աշխատակից չհանդիսացող բեռնատարների վարորդներից, առաքիչ գործակալներից կամ միջնորդներից պահանջվում է մանրաձախ հաստատություններ մտնել կտորե դեմքի ծածկող միջոցներով:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Օդափոխության և օդորակման (HVAC) համակարգը գտնվում է լավ, աշխատանքային վիճակում. առավելագույն հնարավորության չափով ավելացվել է օդափոխությունը: Ցանկալի է բարձր արդյունավետությամբ շարժական օդի մաքրող սարքերի տեղադրել, շենքի օդի մաքրման ֆիլտրերը հնարավորինս բարձր արդյունավետությամբ արդիականացնել և այլ փոփոխություններ կատարել՝ գրասենյակներում և այլ վայրերում արտաքին օդի և օդափոխության քանակի ավելացման համար:
 - Առկա են առանց շփման վճարային համակարգեր, կամ եթե հնարավոր չէ, վճարային համակարգերը պարբերաբար ախտահանվում են: Նկարագրեք.
-
- Ընդհանուր տարածքները և հաճախակի հպվող իրերը հաճախորդների պատվերների վերցման և վճարման տարածքում (օր.՝ սեղաններ, դռների բռնակներ կամ բռնակները, կրեդիտ քարտերը կարդացող սարքերը) աշխատանքային ժամերին ժամը մեկ ախտահանվում են՝ օգտագործելով EPA-ի կողմից հաստատված ախտահանիչներ:
 - Աշխատանքային տարածքները և ամբողջ հաստատությունը մաքրվում են առնվազն օրը մեկ անգամ. ընդ որում՝ զուգարաններ և հաճախակի հպվող տարածքները/առարկաները մաքրվում են ավելի հաճախ:
 - Մանրածախ խանութի ժամերը փոփոխվել են, որպեսզի բավարար ժամանակ հատկացվի կանոնավոր խորը մաքրման և արտադրանքի պահեստավորման համար: Դասավորեք պահեստավորման աշխատանքներն այնպես, որ աշխատակիցները տարբեր միջանցքներում գտնվեն:
 - Որտեղ հնարավոր է, խրախուսեք հաճախորդներին դեբիտ կամ կրեդիտ քարտերի օգտագործումը, խրախուսեք հաճախորդներին, որքան հնարավոր է հաճախակի մաքրել իրենց բազմակի օգտագործման պայուսակները, և պահանջեք բազմակի օգտագործման պայուսակներ բերող հաճախորդներին ինքնուրույն տեղավորել իրենց գնումները:
 - Հաստատություն ժամանող այցելուներին հիշեցվում են, որ հաստատությունում կամ դրա տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում հարկավոր է դեմքի ծածկոցներ կրել (բացառությամբ՝ ուտելիս կամ խմելիս, եթե կիրառելի է): Մա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ երեխաներին: Միայն այն անձիք, ում բուժաշխատողը հանձնարարել է չկրել դեմքի ծածկոց, ազատվում են այս պահանջից: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությանն աջակցելու նպատակով՝ հարկավոր է դեմքի ծածկոցներ տրամադրել այն այցելուներին, ովքեր գալիս են առանց դրանց:
 - Իրականացվում է այցելուների ստուգումներ՝ նախքան այցելուներին կթույլատրվի աշխատավայր մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ ստուգման առցանց համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված [նշաններով](#), որոնք տեղեկացնում



ԷՆ, որ նման ախտանիշներով այցելուները չպետք է տարածք մտնեն:

- Երեխաների հետ եկած հաճախորդները պետք է ապահովեն, որ իրենց երեխաները մնան ծնողի կողքին, խուսափեն դիպչելուց որևէ այլ անձի կամ որևէ իրի, որն իրենց չի պատկանում, և դիմակավորված լինեն, եթե տարիքը թույլ է տալիս:
- Խանութի ներսի բարերը, քաշով գնումները և արտադրանքի նմուշառումը չեն գործում:
- Գնումները հաճախորդներին տրվում են փակված փաթեթներով կամ տոպրակներով, որոնց կցված է ստացականը:
- Հնարավոր վայրերում տեղադրվել են առանց հպվելու սարքեր, ներառյալ՝ շարժումի ցուցիչով լույսերը, առանց հպման վճարային համակարգերը, օձառի և թղթից սրբիչների ավտոմատ դիսպենսերները և ժամանակացույցի համակարգերը:
- Հաստատության մուտքում կա մուտքի մոտ հանրությանը տրամադրվում է ձեռքի ախտահանիչ միջոց, անձեռոցիկներ և աղբի դուլեր:
- Բոլոր վճարման պորտալները, գրիչները և ստիլումները ախտահանվում են տարբեր մարդկանց կողմից յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Լրացուցիչ (ընտրովի)- Նկարագրեք այլ միջոցառումներ (օր.՝ միայն տարեցներին սպասարկման ժամերի տրամադրում, ոչ-պիկային վաճառքների խրախուսում):

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Այս արձանագրության պատճեն փակցված է հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ:
- Մուտքի մոտ և/կամ այն վայրում, որտեղ հաճախորդները շարք են կանգնում, նշաններ փակցրեք՝ նախապես պատվիրելու և վճարելու առավելությունների վերաբերյալ:
- Հաստատության առցանց վաճառքի պորտալները (վեբ կայք, սոցիալական մեդիա, այլն) հստակ տեղեկատվություն են տրամադրում խանութի ժամերի, դեմքի ծածկող միջոցների օգտագործման անհրաժեշտության, նախապես պատվիրելու և վճարելու, պատվերը վերցնելու և/կամ առաքման և այլ նմանատիպ քաղաքականության վերաբերյալ:

E. ԽԻՍՏ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Գնումների հատուկ ժամեր են հատկացվել խոցելի բնակչության, ներառյալ՝ տարեցների և առողջական խնդիրներ ունեցողների համար, եթե կիրառելի է, ցանկալի է լրիվ մաքրումից հետո:
- Հաճախորդների համար կարևոր նշանակություն ունեցող ծառայություններն առաջնահերթություն են ստացել:
- Գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռակա կարգով, դարձել են առցանց:
- Միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի շարժման սահմանափակումներ և/կամ բարձր ռիսկի տակ գտնվող հաճախորդների համար հանրային վայրերում ապահովվի ապրանքների հասանելիությունը:



Վերոհիշյալ միջոցառումներում չներառված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնք բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության մասին ցանկացած հարցի կամ մեկնաբանության համար կարող եք կապվել հետևյալ անձի հետ՝

Բիզնեսի
կոնտակտային
անուն՝

Հեռախոսահամար՝

Վերջին
վերանայման
ամսաթիվ՝